«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի N 34-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագիծ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 34-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի «0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը սահմանելու մասին» 34-Ն հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

«Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարի 2023 թվականի

-ի N -Ն հրամանի

«Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարի 2022 թվականի

սեպտեմբերի 7-ի N 34-Ն հրամանի

ԿԱՐԳ

0-6 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. **Ընդհանուր դրույթներ**

1. Սույն կարգով կարգավորվում են 0-6 տարեկան երեխայի (այսուհետ՝ սան) և կրթական գործընթացի մյուս մասնակիցներին կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների (այսուհետ՝ աջակցության ծառայություններ) տրամադրման հետ կապված իրավահարաբերություններն ըստ մակարդակների.

- նախադպրոցական ուսումնական հաստատության մակարդակ, որը տրամադրվում է նախադպրոցական ուսումնական հաստատության կողմից (այսուհետ՝ հաստատություն),
- տարածքային մակարդակ, որը տրամադրվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից (այսուհետև՝ տարածքային կենտրոն).
- հանրապետական մակարդակ, որը տրամադրվում է հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից (այսուհետև՝ հանրապետական կենտրոն):

2. Աջակցության ծառայությունները կրթական գործընթացի

մասնակիցներին տրամադրվում են չորս հիմնական ուղղություններով՝

- հարմարեցված և մատչելի միջավայրի ստեղծում.
- խելամիտ հարմարեցումների տրամադրում.
- կրթության մատչելիության, ներառականության, որակի ու արդյունավետության բարձրացում.
- սանի անհատական ուսուցման և զարգացման պլանով (այսուհետև՝ ԱՈՒԶՊ) սահմանված աջակցության ծառայությունների տրամադրում (Ձև 1):

2. **Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում**

3. Սանի՝ նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանները, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումները սահմանելու նպատակով իրականացվում է սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում՝ Տարածքային կենտրոնի կողմից։
4. Սանի՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը բաղկացած է երեք փուլից՝

- 1-ին փուլ՝ սանի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում,
- 2-րդ փուլ՝ սանի զարգացման հնարավորությունների բացահայտում և գնահատում,
- 3-րդ փուլ՝ կրթության և զարգացման առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում:

5. Սանի՝ կրթական ծրագրերին մասնակցության դիտարկումն ու զարգացման հնարավորությունների բացահայտումը իրականացվում են սանի հաստատությունում՝ ուսումնառության ընթացքում։
6. Գնահատման 1-ին և 2-րդ փուլերի ընթացքում ուսումնասիրվում է նաև սանի ուսումնառության արդյունքների գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը։
7. Գնահատման 3-րդ փուլն իրականացվում է առաջին և երկրորդ փուլերի ընթացքում հավաքագրված տեղեկատվության հիման վրա։
8. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման երեք փուլերի ավարտից հետո սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ տարածքային կենտրոնը կազմում է արձանագրություն և տալիս եզրակացություն։
9. Սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի հերթական գնահատումն իրականացվում է ավագ խումբ անցման նախորդող ուսումնական տարվա ավարտին կամ տվյալ ուսումնական տարվա սկզբին, եթե մինչ այդ սանի համար կրթության և զարգացման առանձնահատուկ նոր պայմանների սահմանման

անհրաժեշտություն չի առաջացել:

10. Այն դեպքում, երբ երեխան ընդունվում է կամ որևէ նախադպրոցական ուսումնական հաստատությունից տեղափոխվում է նախակրթարան, ապա նրա կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է նախակրթարանում՝ ուսումնական տարվա սկզբին:
11. Սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ Տարածքային կենտրոնի կողմից տրված եզրակացությունն ու արձանագրությունը (համաձայն ձև 2-ի և ձև 3-ի) ստանալուց հետո՝ 5-10 աշխատանքային օրվա ընթացում, Հաստատությունն ու Տարածքային կենտրոնը միասին մշակում և հաստատում են սանի ԱՈՒԶՊ-ը, որով սահմանվում են կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանները և այդ պայմանների ապահովմանն ուղղված սանին, նրա մանկավարժներին և ծնողին տրամադրվող Աջակցության ծառայությունները՝ ըստ մակարդակների: Յուրաքանչյուր հաջորդ տարում, այդ թվում հերթական գնահատման ժամանակ ԱՈՒԶՊ-ը մշակվում և հաստատվում է մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 20-ը:
12. Հաստատության և տարածքային կենտրոնի տնօրենների տեղակալները, համատեղ, երկու ամիսը մեկ անգամ, հրավիրում են միասնական ժողով՝ ամփոփելու տվյալ ամիսների ընթացքում տրամադրած աջակցության ծառայությունները, արձանագրելու սաների ունեցած ձեռքբերումները, առաջընթացը և առկա դժվարությունները, առաջարկներ ներկայացնելու սանի մոտ առկա դժվարությունների հաղթահարման աշխատանքների ձևերի և մեթոդաբանության ուղղությամբ: Միասնական ժողովի արձանագրությունը հաստատում են տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը և Հաստատության ուսումնական գծով տնօրենի տեղակալը (այսուհետ՝ մեթոդիստ) (Ձև 4): ԱՈՒԶՊ-ը և ԱՈՒԶՊ-ի գնահատման արձանագրությունը հիմք է հանդիսանում Հանրապետական կենտրոնի կողմից իրականացվող մշտադիտարկումների համար:
13. Սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և աջակցության ծառայությունների տրամադրման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը տարածքային կենտրոնը և Հաստատությունը մուտքագրում են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների տվյալների միասնական բազա:
14. Սանի վերաբերյալ մշակված անձնական տվյալները (ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել սանի ինքնությունը), գաղտնի են և չեն կարող փոխանցվել երրորդ անձանց՝ առանց ծնողի (օրինական ներկայացուցչի) (այսուհետ՝ ծնող) գրավոր համաձայնության: Տվյալների փոխանցումը երրորդ անձանց՝ առանց ծնողի համաձայնության, հնարավոր է միայն օրենքով սահմանված կարգով:
15. **ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**
16. Եթե նախադպրոցական ուսումնական գործընթացում սանի մոտ նկատվել են ուսումնառության հետ կապված կայուն դժվարություններ, ապա կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններ

սահմանելու նպատակով՝ սանը կարող է ներկայացվել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման՝ Հաստատության դիմումի հիման վրա, եթե դիմումին կցված է ծնողի ստորագրած համաձայնագիրը, կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա (ՁԵ 5, 6, 7)։

17. Սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կարող է իրականացվել նաև անմիջականորեն ծնողի դիմումի հիման վրա՝ նույն ընթացակարգով (ՁԵ 8)։
18. Սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը ղեկավարում է տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը, ով պատասխանու է ողջ գործընթացի սահուն և օբյեկտիվ իրականացման համար։
19. Հաստատությունում սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացի կազմակերպման և համակարգման պատասխանատուն Հաստատության մ է, իսկ հաստիքի բացակայության դեպքում՝ տնօրենը։
20. Սանին կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ներկայացնելու համար հաստատությունը կազմում է հետևյալ փաստաթղթերի փաթեթը՝

- հաստատության դիմումը՝ կից ծնողի համաձայնությամբ.
- ծնողի անձնագրի և երեխայի ծննդյան վկայականի պատճենը.
- սանի հանրային ծառայության համարանիշը կամ դրանից հրաժարված լինելու մասին տեղեկանքը, իսկ 2019 թվականի սեպտեմբերի մեկից հետո ծնվածների դեպքում՝ ծննդյան վկայականը.
- սանի ուսումնառության և զարգացման ընթացքում արձանագրված կայուն դժվարությունների կամ դրսևորված բացառիկ ընդունակությունների, ինչպես նաև նրա գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվության ամփոփ նկարագրությունը (ՁԵ 9).
- այլ փաստաթղթեր, որոնք, ըստ հաստատության կամ ծնողի հայեցողության, կարող են սանի մասին օգտակար տեղեկատվություն տրամադրել։

20. Հաստատության դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ստանալուց հետո, առնվազն 5 աշխատանքային օրվա ընթացքում, տարածքային կենտրոնը նշանակում է սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը սկսելու օրը, որի մասին նախօրոք, դիմումը ստանալուց հետո առնվազն 7 աշխատանքային օրվա ընթացքում, տեղեկացնում է հաստատությանը։
21. Տարածքային կենտրոնի տնօրենի հրամանով ձևավորվում է տվյալ սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատող մանկավարժական աշխատողների խումբ (այսուհետ՝ գնահատող խումբ)։ Գնահատող խմբում ներառում է տարածքային կենտրոնի առնվազն երկու մանկավարժ (հատուկ մանկավարժ և սոցիալական մանկավարժ) և մեկ հոգեբան, ըստ անհրաժեշտության գնահատող խմբում կարող են ներգրավված լինել նաև այլ մանկավարժներ և մասնագետներ։
22. Սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացում ներգրավված են նաև

հաստատության տվյալ խմբի դաստիարակն ու դաստիարակի օգնականը, այլ մանկավարժական աշխատողները, սանը և նրա ծնողը։

23. Հաստատությունում սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տևում է 5-ից 25 աշխատանքային օր։
24. Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ավարտից հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում, գնահատող խումբը սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների վերաբերյալ կազմում է արձանագրություն և տալիս եզրակացություն։
25. Սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման եզրակացությունը և արձանագրությունը, որոնցում սահմանված են սանի՝ նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանները, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումները և սանին տրամադրվող կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության աստիճանը, հաստատում է տարածքային կենտրոնի տնօրենը։ Արձանագրության և եզրակացության բնօրինակը տարածքային կենտրոնը տրամադրում է սանի ծնողին, իսկ պատճենը՝ Հաստատություն։
26. Սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ տարածքային կենտրոնի կողմից տրված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում, սանի ծնողը կարող է եզրակացությունը ստանալուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր բողոքարկել հանրապետական կենտրոն։
27. Ծնողի գրավոր բողոքը ստանալու և մուտքագրելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում հանրապետական կենտրոնի տնօրենի հրամանով ստեղծվում է բողոքը քննող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով)։
28. Հանձնաժողովը տարածքային կենտրոնից ստանում է սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ընթացքում հավաքագրված և փաստաթղթավորված ողջ տեղեկատվությունը։
29. Բողոքը քննության առնելիս հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության, կարող է հրավիրել համապատասխան այլ մասնագետներ, ինչպես նաև սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատած տարածքային կենտրոնի խմբին, հաստատության մեթոդիստին, մանկավարժական աշխատողներին, սանի ծնողին։ Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է իրականացնել ուսումնական գործընթացում սանի դիտարկում։
30. Բողոքի քննությունը իրականացվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում։
31. Բողոքի քննությունը ավարտելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, հանձնաժողովը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

- սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման եզրակացությունը անփոփոխ թողնելու մասին, կամ
- սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների

գնահատման եզրակացությունը տարածքային կենտրոնի կողմից վերանայելու մասին։

32. Հանձնաժողովի ընդունած որոշումը վավերացնում է հանրապետական կենտրոնի տնօրենը։
33. Հանձնաժողովի ընդունած որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված դատական կարգով։
34. **ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**
35. Հաստատության մակարդակի աջակցության ծառայությունների պատասխանատուն հաստատության տնօրենն է։
36. Հաստատության մակարդակի աջակցության ծառայությունները տրամադրվում են հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից (այսուհետ՝ հաստատության խումբ), որի կազմում ընդգրկվում են տվյալ խմբի դաստիարակն, ու դաստիարակի օգնականը, մեթոդիստը, բուժքույրը, մանկավարժական այլ աշխատողներ։
37. Աջակցության ծառայությունների կազմակերպման և հաստատության խմբի աշխատանքների համակարգման պատասխանատուն հաստատության մեթոդիստն է, իսկ հաստիքի բացակայության դեպքում՝ հաստատության տնօրենը ։
38. Հաստատության մակարդակի աջակցության ծառայությունների տրամադրումը, համաձայն սույն կարգի 11-րդ կետի, իրականացվում է ԱՈՒԶՊ-ի հաստատումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:
39. Հաստատության տնօրենը.

- ապահովում է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սանի ԱՈՒԶՊ-ով սահմանված խելամիտ հարմարեցումների՝ ուսուցման և զարգացման անհատական տեխնիկական միջոցների և գույքի, սարքավորումների, մատչելի ձևաչափերով (տպագիր, աուդիո և վիդեո) մշակած ուսումնական նյութերի, բանավոր և գրավոր հաղորդակցման այլընտրանքային միջոցների տրամադրումը.
- պետական բյուջեի միջոցների հաշվին, ստեղծում է հաստատությունում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սանների ազատ տեղաշարժն ու կրթական գործընթացին նրանց ակտիվ մասնակցությանը հարմարեցված մատչելի միջավայր, այդ թվում՝ մատչելի տարածքով և գույքով խմբասենյակներ, ննջարաններ, ճաշարան, մարզադահլիճ, խաղահրապարակ և սանհանգույցներ.

39. Հաստատության խումբն աջակցում է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սանի հետ աշխատող մանկավարժական աշխատողներին.

- պլանավորելու, ապահովելու և գնահատելու նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով և ծրագրերով նախատեսված՝ սանի առանձնահատկություններին, զարգացման հնարավորություններին և առավելագույն ներուժին համապատասխան

գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորումը.

- կիրառելու ուսուցման երեխայակենտրոն և ինտերակտիվ մեթոդներ՝ յուրաքանչյուր սանի համար ուսումնական գործընթացը հավասարապես խթանելու, ինչպես նաև կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների ներառումն ու ակտիվ մասնակցությունն ապահովելու համար.
- սանի մանկավարժներին, սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքին համապատասխան, իրականացնելու առաջադրանքի, գնահատման ու ժամանակի պլանավորման խելամիտ հարմարեցումներ.
- սաներին և ծնողներին՝ ուսման մեջ, առօրյա հարաբերություններում և արտակարգ իրավիճակներում հանդիպող արգելքների և դժվարությունների հաղթահարման գործընթացում.

40. Հաստատության մեթոդստը կարող է հրավիրել ընդլայնված ժողով՝ տարածքային խմբի անդամների մասնակցությամբ, եթե անհրաժեշտություն է առաջացել վերանայելու սանի ԱՈՒԶՊ-ով սահմանված աջակցության ծառայությունները՝ համաձայն սանի ուսումնառության արդյունքների։
41. Սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, գնահատման արձանագրության և եզրակացության պատճենը, նրա գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման ընթացքում հավաքագրված տեղեկատվության ամփոփ նկարագրությունները և ԱՈՒԶՊ-ի բնօրինակը պահպանվում է սանի անհատական թղթապանակում։
42. Հաստատությունում սանի անհատական թղթապանակի պատասխանատուն հաստատության մեթոդիստն է։

5. **ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**
6. Տարածքային մակարդակի աջակցության ծառայությունների տրամադրման, որակի արդյունավետության պատասխանատուն տարածքային կենտրոնի տնօրենն է։
7. Տարածքային մակարդակի աջակցության ծառայությունները տրամադրվում են տարածքային կենտրոնի մանկավարժահոգեբանական խմբի կողմից (այսուհետև՝ Տարածքային խումբ), որի կազմում ընդգրկված են հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ և հոգեբան, իսկ ըստ անհրաժեշտության նաև այլ մանկավարժներ և մասնագետներ։
8. Տարածքային աջակցության ծառայությունների կազմակերպման և տարածքային խմբի աշխատանքների համակարգման պատասխանատուն տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալն է։
9. Հաստատությունում տարածքային մակարդակի աջակցության ծառայությունները տրամադրվում են սանին, նրա մանկավարժներին և ծնողին՝ համաձայն ԱՈՒԶՊ-ով սահմանված գործողությունների։
10. Տարածքային աջակցության ծառայությունների տրամադրումը սկսվում

է ԱՈՒԶՊ-ի հաստատումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում։

11. Տարածքային կենտրոնը խորհրդատվություն և գործնական աջակցություն է տրամադրում հաստատությանը.

- սանի ԱՈՒԶՊ-ով սահմանված խելամիտ հարմարեցումների (ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, գույք և սարքավորումներ, մատչելի ձևաչափերով (տպագիր, աուդիո և վիդեո) մշակած ուսումնական նյութեր, բանավոր և գրավոր հաղորդակցման այլընտրանքային միջոցներ) ձեռք բերման ու ստեղծման հարցերով.
- մշակելու «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքով սահմանված մատչելի միջավայրի ստեղծման տեխնիկական առաջադրանքներ՝ մատչելի միջավայրի չափանիշներին, այդ թվում՝ համընդհանուր դիզայնի չափանիշներին համապատասխան.
- ձեռքբերելու համապատասխան գույք և սարքավորումներ, ապահովելու համար մատչելի տարածքով խմբասենյակներ, ննջարաններ, ճաշարան, մարզադահլիճ, խաղահրապարակ և սանհանգույցներ։

49. Հաստատությունում տարածքային խումբը հաստատության մանկավարժական թիմին տրամադրում է Աջակցություն հետևյալ ուղղություններով.

- սանի ուսումնական գործընթացում ակտիվ մասնակցությունը խթանելու նպատակով իրականացնում է սանի առաջընթացի, ուսումնական պարապմունքներին և տարբեր ռեժիմային պահերին նրա ներգրավվածության և մասնակցության դիտարկում.
- սանի հետ աշխատող մանկավարժներին (այսուհետ՝ հաստատության խումբ) տրամադրում է խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն սանի ուսումնական նյութերի հարմարեցումների, ուսումնական պարապմունքների պլանավորման, սանի մասնակցությունը խթանող ուսոսման մեթոդների, խմբասենյակում սանի նստատեղի, առաջադրանքների հանձնարարման ու կատարման ձևերի ընտրության, խմբի մյուս երեխաների հետ սոցիալական հարաբերությունների և շփումների խթանման հարցերում.
- խորհրդատվություն և գործնական աջակցություն են տրամադրում սանի հետ աշխատող մանկավարժներին, սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքին համապատասխան, իրականացնելու առաջադրանքի, թեստերի, գիտելիքների, կարողություններեի և հմտությունների գնահատման ու ժամանակի պլանավորման խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով.
- ծնողին խորհրդատվության տրամադրում սանի ուսումնառության արդյունավետության բարձրացման, առկա դժվարությունների հաղթահարման և սոցիալական ու կենցաղային հմտությունների զարգացման ուղղություններով։

50. Սանի ԱՈՒԶՊ-ով սահմանված աջակցության ծառայությունները սանին տրամադրում են հաստատությունում, իսկ ծնողի դիմումի հիման վրա՝ նաև տարածքային կենտրոնում։ Սանին տրամադրվող կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական

աջակցության ծառայությունների տեսակը, տևողությունն ու ծավալները սահմանված են ձև 10-ում։

51. Տարածքային կենտրոնը հաստատության մանկավարժների և սաների ծնողների համար մշակում և իրականացնում է դասընթացներ ու գործնական պարապմունքներ՝ կրթական ծառայությունների մատչելիության, ներառականության, որակի ու արդյունավետության բարձրացման հարցերով։

52. **ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

53. Հանրապետական մակարդակի աջակցության ծառայությունների տրամադրման, որակի և արդյունավետության պատասխանատուն հանրապետական կենտրոնի տնօրենն է։

54. Հանրապետական մակարդակի աջակցության ծառայությունների կազմակերպման և աշխատանքների համակարգման պատասխանատուն հանրապետական կենտրոնի տնօրենի տեղակալն է։

55. Հանրապետական մակարդակի աջակցության ծառայությունները, ըստ տնօրենի կողմից հաստատված տարեկան պլանի և ժամանակացույցի, տրամադրվում են տարածքային կենտրոնների տնօրեններին, մանկավարժական աշխատողներին հետևյալ ուղղություններով.

- վերապատրաստումների (կամ դասընթացների և սեմինար պարապմունքների) կազմակերպում ու իրականացում՝ յուրաքանչյուր տարածքային կենտրոնում՝ տարեկան առնվազն երկու անգամ.
- տարվա ընթացքում տարածքային կենտրոնի աշխատակիցների համար կազմակերպում է խորհրդատվություն սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման, եզրակացության կազմման և նրա ԱՈՒԶՊ-ով կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների սահմանման հարցերով.
- յուրաքանչյուր տարածքային կենտրոնում տարեկան առնվազն երկու անգամ կազմակերպում է դասընթաց՝ խելամիտ հարմարեցումների տրամադրման, ուսումնական նյութերի, թեստերի և գիտելիքների ստուգման ձևերի հարմարեցումների, ուսումնական պարապմունքների պլանավորման, ուսուցման մեթոդների, սանին և ծնողին տրամադրվող աջակցության ծառայությունների առնչվող հարցերով.

55. Հանրապետական կենտրոնը կազմակերպում է տարածքային աջակցության ծառայությունների շարունակական մշտադիտարկում՝ յուրաքանչյուր մարզում առնվազն ամիսը մեկ անգամ և, տվյալ եռամսյակի ավարտին, վերլուծում է հավաքագրած տեղեկատվությունն ու յուրաքանչյուր տարածքային կենտրոնի առաջարկություններ է ներկայացնում՝ աջակցության ծառայությունների բարելավման ուղղությամբ։

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

1. ՍԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1.1 Ազգանուն, անուն, հայրանուն՝

1.2 Ծննդյան վայր՝

1.3 Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝

1.4 Սեռը՝ □ իգական □ արական

1.5 Քաղաքացիությունը՝

1.6 Բնակության հասցեն՝

1.7 Ուսումնական հաստատությունը՝

1.8 Խումբ (նշել ուսումնական տարին)՝

1.9 Ծնողների (օրինական ներկայացուցիչների) անուններն ու հեռախոսահամարները՝

1.10 Արտակարգ իրավիճակների դեպքում՝ կապի միջոց՝ աշխատանքային և բնակար

2. ՍԱՆԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 Հաշմանդամություն
☐ ունի ☐ չունի

2.2 Բացառիկ ընդունակությունների դրսևորումը հետևյալ ոլորտներում

_____

_____

_____

2.3 Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության աստիճա
տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության հետ կաս

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք	**Աջակցության աստիճան**	
	1-ին	**2-րդ**
Խոսքի և լեզվի		
Հաղորդակցման		
Լսողության		
Տեսողության		
Ինտելեկտի (մտավոր)		
Հուզական		
Վարքի		

Շարժունակության

2.4 ՍԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ

3. ՍԱՆԻՆ, ՆՐԱ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻՆ ԵՎ ԾՆՈՂԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆ

3.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ	ՄԱՆԿԱՎԱՐԺ	ԾՆՈՂ
Ուսուցման և ուսումնառության գործընթացի մատչելիության, ներառականության և արդյունավետության ապահովում Խելամիտ հարմարեցումների ապահովում		
Երկարօրյա ուսուցման պլանավորում և իրականացում		

3.2 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ (դասընթացներ, խորհրդատվություն, մասնագիտական, մեթոդական աջակցություն և այլն)	ՄԱՆԿԱՎԱՐԺ	ԾՆՈՂ

3.3 Սանին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ

Հատուկ մանկավարժական ծառայություն	**Տևողություն**	**Ծավալներ**
լոգոպեդ		
տիֆլոմանկավարժ		
սուրդոմանկավարժ		
օլիգոֆրենոմանկավարժ		
էրգոթերապիստ		

Հոգեբանական ծառայություն	**Տևողություն**	**Ծավալներ**
հոգեբան		

Սոցիալ մանկավարժական ծառայություն	**Տևողություն**	**Ծավալներ**

սոցիալական մանկավարժ

4. ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ, ԸՍՏ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱ

Տվյալ տարում ծրագրով նախատեսված բաղադրիչներ	**Ծրագրային բաղադրիչներ, որոնք ուսումնասիրում է տվյալ ուսումնա**

5. ՍԱՆԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ՝ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ՝

Մանկավարժական աշխատող՝ _____

_____

Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավ

1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5 - շատ լավ

Տարեկան նպատակ	**Կարճաժամկետ նպատակներ**	**Ուսումնա միջավայր սարքեր ն**

.

.

.

6. ՍԱՆԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ՝ ՏԱՐԵԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

6.1 ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավ

1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5 - շատ լավ

Լոգոպեդ _____

Տարեկան նպատակ	**Կարճաժամկետ նպատակներ**	**Ուսումնա միջավայր սարքեր և**
1.	.	
	.	
	.	
	.	

Տիֆլոմանկավարժ _____

Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա միջավայր սարքեր և
1.	.	
	.	
	.	
	.	

Սուրդոմանկավարժ _____

Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա միջավայր սարքեր և
1.	.	
	.	
	.	
	.	

Օլիգոֆրենոմանկավարժ _____

Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա միջավայր

		սարքեր և
1.	.	
	.	
	.	
	.	

Էրգոթերապիստ _____

Տարեկան նպատակ	**Կարճաժամկետ նպատակներ**	**Ուսումնա միջավայր սարքեր և**
1.	.	
	.	
	.	
	.	

6.2 ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հոգեբան _____

Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավ

1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5-շատ լավ

Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա միջավայր սարքեր և
1.	.	
	.	
	.	
	.	

6.3 ՍՈՑԻԱԼ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական մանկավարժ

Արդյունք բաժնում գնահատվում է սահմանված քայլերի արդյունավետությունը 5 միավ

1 - շատ վատ 2 – վատ 3 – բավարար 4 - լավ 5-շատ լավ

Տարեկան նպատակ	Կարճաժամկետ նպատակներ	Ուսումնա միջավայր սարքեր և
	.	
	.	
	.	
	.	

7. ԱՈՒԶՊ-Ի ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

7.1 ՍԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ

7.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ԿԱՄ ՀԱՋՈՐԴ ԿՐԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

_____

_____

_____

_____

Սանի կրթության արդյունավետ իրականացման համար առաջարկվում է՝

☐ **Սանի կրթությունը կազմակերպել անհատական ուսուցման և զարգացման պլանով**

● Հետևյալ ծրագրային բաղադրիչների հարմարեցումներով (նշել բոլոր անհրաժեշտներ

_____ _____

_____ _____

_____ _____

● Հետևյալ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմա

☐ Հատուկ մանկավարժական ծառայություն (լոգոպեդ, օլիգոֆրենոմանկավարժ, սուրդ

☐ Սոցիալական մանկավարժի ծառայություն

☐ Հոգեբանական ծառայություն

☐ **Իրականացնել սանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատո**

☐ _____ (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ի
խնդիրներով պայմանավորված մանկավարժահոգեբանական աջակցության _____

☐ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը չեղարկելու նպատակով:

Գնահատման հիմնավորում _____

ԾՆՈՂԻ (ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ) ՀԱՎԱՍՏԻԱՑՈՒՄԸ

Ես՝ _____ս, սույնով հավաստիացնում եմ, որ մասնակ
մշակման գործընթացին և գիտակցում եմ, որ սույն ԱՈՒԶՊ-ի տարեկան և կարճաժամկ
հարմարեցվել և պարզեցվել են երեխայիս կարողությունների և հմտությունների առավ
կրթության և զարգացման արդյունքներն ու ձեռքբերումները գնահատվելու են ըստ իր

_____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

ԱՈՒԶՊ-ը մշակող խումբ՝

	Ազգանուն, անուն	Պաշտոն	Ստորագրություն
1.	_____	_____	_____
2.	_____	_____	_____
3.	_____	_____	_____
4.	_____	_____	_____

Հաստատված է՝

_____ **նախադպրոցական ուսումնական հաստատություն**

Տնօրեն՝ _____ _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

Ամսաթիվ՝ ԿՏ

_____ **աջակցու**

Տնօրեն՝ _

(անուն, ազգա

Ամսաթիվ

Ձև 2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ

ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անուն, հայրանուն, ազգանուն՝
_____

Ծննդյան օր, ամիս, տարի՝_____, **Ծննդյան վկայական՝**
_____

ՆՈՒՀ՝_____ **Խումբ՝** _____

Գնահատման սկիզբ՝_____, **Գնահատման ավարտ՝**
_____

☐ Առաջին անգամ

☐ Հերթական անգամ

☐ Բողոքարկում

Եզրակացություն՝

☐ ունի _____ (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության) խնդիրներով պայմանավորված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք և սանին տրամադրվող կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական ծառայությունների _____ (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ) աստիճանի աջակցության կարիք:

☐ ունի բացառիկ ընդունակություններով պայմանավորված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք:

☐ չունի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք:

_____ տարածքային մանկավարժահոգեբանական

աջակցության կենտրոնի տնօրեն՝ _____ _____
_____
(անուն, ա
(ստորագրությո
ւն)

Կ.Տ

Ձև 3

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Անուն, հայրանուն, ազգանուն՝ _____

Ծննդյան օր, ամիս, տարի՝ _____, Ծննդյան վկայական՝ _____

ՆՈՒՀ՝ _____ Խումբ՝ _____

Գնահատման սկիզբ՝_____, Գնահատման ավարտ՝ _____

☐ Առաջին անգամ

☐ Հերթական անգամ

☐ Բողոքարկում

Հաշմանդամություն՝

☐ Ունի

☐ Չունի

_____ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի տնօրենի _____ հրամանով ձևավորված գնահատման մասնագետների խումբն արձանագրել է հետևյալ տեղեկատվությունը և արել հետևյալ առաջարկությունները սանին տրամադրվող կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների վերաբերյալ

☐ ունի _____ (խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության)

խնդիրներով պայմանավորված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք և սանին տրամադրվող կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական ծառայությունների _____ (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ) աստիճանի աջակցության կարիք:

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք	**1-ին**	**2-րդ**	**3-րդ**
Խոսքի և լեզվի			
Հաղորդակցման			
Լսողության			
Տեսողության			
Ինտելեկտի (մտավոր)			
Հուզական			
Վարքի			
Շարժունակության			

☐ ունի բացառիկ ընդունակություններով պայմանավորված կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք:

☐ չունի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք:

ՍԱՆԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է.

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**Ուսումնական հաստատության մակարդակի ծառայություններ**	**Տարածքային մակարդակի ծառայություններ**
Ուսումնառության գործընթացի մատչելիության, ներառականության և արդյունավետության ապահովում		
Խելամիտ հարմարեցումների ապահովում		
Տրանսպորտային ծառայություն	☐ ունի ☐ չունի	

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության հետևյալ ծառայությունները

Հատուկ մանկավարժական ծառայություն Տևողություն Ծավալներ

☐ լոգոպեդ
☐ տիֆլոմանկավարժ
☐ սուրդոմանկավարժ
☐ օլիգոֆրենոմանկավարժ
☐ Էրգոթերապիստ

Հոգեբանական ծառայություն Տևողություն Ծավալներ

☐ հոգեբան

Սոցիալ-մանկավարժական ծառայություն Տևողություն Ծավալներ

☐ սոցիալական մանկավարժ

Կիրառված գործիքակազմ՝ _____

Գնահատողներ՝

Հատուկ մանկավարժ՝ _____

Հոգեբան՝ _____

Սոցիալական մանկավարժ՝ _____

_____ տարածքային
մանկավարժահոգեբանական
աջակցության կենտրոնի տնօրեն՝ _____ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն

Կ.Տ.

Ես՝_____ս, մասնակցել եմ երեխայիս՝ _____ի գնահատմանը և համաձայն եմ/համաձայն չեմ գնահատման արդյունքներին: Տալիս եմ/Չեմ տալիս իմ համաձայնությունը երեխայիս կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման արդյունքում արված առաջարկներին:

Ծնող՝ _____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Տրման ամսաթիվ՝ _____

Ձև 4

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սանի անուն, հայրանուն,
ազգանուն՝ _____

Ուսումնական հաստատություն՝ _____, **Խումբ՝**
_____

Ամփոփ նկարագիր (ձեռքբերումներ, առաջընթաց, առկա դժվարություններ)

_____
_____
_____
_____
_____
_____

Առաջարկություններ (առկա դժվարությունների հաղթահարմանն ուղղված աշխատանքների ձևեր և մեթոդաբանություն)

_____
_____
_____
_____
_____
_____

Ուսումնական հաստատության տնօրենի տեղակալ՝
_____

(ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ տարածքային
մանկավարժահոգեբանական

աջակցության կենտրոնի տնօրենի տեղակալ՝ _____ _____
_ _

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Հաստատման օր, ամիս, տարի՝ _____

Ձև 5

_____ տարածքային

մանկավարժահոգեբանական

աջակցության կենտրոնի

տնօրեն _____ին

ԴԻՄՈՒՄ

ՍԱՆԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

(ուսումնական հաստատության)

1. Սանի անուն, հայրանուն, ազգանուն՝
   _____
2. Ծննդյան օր, ամիս, տարի՝_____/_____/_____

3. ՆՈՒՀ, խումբ՝
   _____
4. Հասցե, հեռախոս՝
   _____
5. Ծնողի անուն, ազգանուն՝ _____
6. Դիմումի ներկայացման ամսաթիվ՝
   _____/_____/_____

Հիմք ընդունելով _____ՆՈՒՀ-ի _____ խմբի սան՝ _____ի ուսումնառության գնահատման արդյունքների վերլուծությունը, խնդրում եմ սահմանված կարգով իրականացնել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը:

Ամսաթիվ՝ _____/_____/_____

ՆՈՒՀ-ի տնօրեն՝ _____ _____

(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ

Ձև 6

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես՝ _____ս, տալիս եմ իմ համաձայնությունը՝ իրականացնելու երեխայիս՝ _____ի, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը:

Ամսաթիվ՝ _____/_____/_____

Ծնող (օրինական ներկայացուցիչ)՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն

Ձև 7

_____ տարածքային

մանկավարժահոգեբանական

աջակցության կենտրոնի

տնօրեն _____ին

ԴԻՄՈՒՄ

ԵՐԵԽԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

(խնամակալության և հոգաբարձության մարմնի)

1. Երեխայի անուն, հայրանուն, ազգանուն՝
   _____
2. Ծննդյան օր, ամիս, տարի՝ _____/_____/_____
3. ՆՈՒՀ, խումբ՝
   _____
4. Հասցե, հեռախոս՝
   _____
5. Ծնողի անուն, ազգանուն՝ _____
6. Դիմումի ներկայացման ամսաթիվ՝
   _____/_____/_____

Հիմք ընդունելով _____ ուսումնական հաստատության դիմումը եւ Խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովի որոշումը՝ _____ ՆՈՒՀ-ի _____ խմբի սան՝ _____ի ուսումնառության գնահատման արդյունքների վերլուծության մասին, առաջարկում եմ սահմանված կարգով իրականացնել սանի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը:

Ամսաթիվ՝ _____/_____/_____

Տեղական ինքնակառավարման մարմնի _____ ղեկավար/

Երևանի _____ վարչական շրջանի ղեկավար

_____ _____

(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ձև 8

_____ տարածքային

մանկավարժահոգեբանական

աջակցության կենտրոնի

տնօրեն _____ին

ԴԻՄՈՒՄ

ԵՐԵԽԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

Հարգելի տիկին/պարոն _____

(ազգանուն)

Ես՝_____ս, խնդրում եմ Ձեզ իրականացնել երեխայիս՝ _____ի, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը:

Ծնող՝ _____

(անուն, ազգանուն)

Ստորագրություն _____ Ամիս, ամսաթիվ _____

Ձև 9

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Անուն, հայրանուն, ազգանուն՝ _____

ՆՈՒՀ՝ _____, **Խումբ՝** _____

Ուսումնառության ընթացքում արձանագրված կայուն դժվարությունների ամփոփ նկարագիր

_____

_____

_____

_____

_____

_____

Ուսումնական հաստատության

տնօրենի տեղակալ՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն

Ամսաթիվ՝ _____

Ձև 10

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՋԱԿՑՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՏԵՍԱԿԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԾԱՎԱԼՆԵՐԸ

Ծառայությունների ժամկետային և ծավալային ցուցանիշներն ըստ կրթության առանձ

կարիքի և մանկավարժահոգեբանական աջակցության աստիճանի

Հատուկ մանկավարժական ծառայություն	**1-ին աստիճան = հսկում (թեթև)**	**2-րդ աստիճան = հաճախակի աջակցություն (միջին)**	**3-ր հա աջ (ծ**
Լոգոպեդի ծառայություն	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 60 րոպե տևողությամբ, որից առնվազն 45 րոպե սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առնվազն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըս ա հա ա մ ան աջ շա տ 60 ան ան պ*
Տիֆլոմանկա-վարժի ծառայություն	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 60 րոպե տևողությամբ, որից առնվազն 45 րոպե սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առնվազն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըս ա հա ա մ ան աջ շա տ 60 ան ան պ*
Սուրդոմանկա-վարժի ծառայություն	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական*	*Ըս ա հա ա մ ան*

	աջակցությունը՝ շաբաթական 60 րոպե տևողությամբ, որից առնվազն 45 րոպե սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով	*աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առնվազն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*աջ շա տ 60 ան ան պա*
Օլիգոֆրենո-մանկավարժի ծառայություն	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 60 րոպե տևողությամբ, որից առնվազն 45 րոպե սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առնվազն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըս ապ հա ասխ մա ան աջ շա տ 60 ան ան պա*
Էրգոթերապիստի ծառայություն	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 60 րոպե տևողությամբ, որից առնվազն 45 րոպե սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առնվազն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըս ապ հա ասխ մա ան աջ շա տ 60 ան ան պա*
Հոգեբանական ծառայություն	**1-ին աստիճան = հսկում (թեթև)**	**2-րդ աստիճան = հաճախակի աջակցություն (միջին)**	**3- հա աջ (ծ**
Հոգեբանի ծառայություն	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 60 րոպե տևողությամբ, որից առնվազն 45 րոպե սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առնվազն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըս ապ հա ասխ մա ան աջ շա տ 60 ան ան պա*

Սոցիալ-մանկավարժական ծառայություն	**1-ին աստիճան = հսկում (թեթև)**	**2-րդ աստիճան = հաճախակի աջակցություն (միջին)**	**3-ր հա աջ (ծ**
Սոցիալական մանկավարժի ծառայություն	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 60 րոպե տևողությամբ, որից առնվազն 45 րոպե սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըստ կարիքի ապահովել համապատասխան մասնագիտական աջակցությունը՝ շաբաթական 90 րոպե տևողությամբ, որից առնվազն 60 րոպե (շաբաթական երկու անգամ՝ 30 րոպե) սանի հետ անհատական կամ խմբային պարապմունքների տեսքով*	*Ըս աս հա աս մա ան աջ շա տ 60 ան ան պա*